




ՏԵՂԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՉՈՐԵՂԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ/ LEAD4SHIRAK

Ծրագրի տևողությունը՝ հոկ. 2020- սեպ. 2024
Ծրագրի բյուջեն՝ € 4.496.717

LEADER-ը համայնքային զարգացման ԵՄ նախաձեռնություն է, որի նպատակն է վերակենդանացնել գյուղական շրջանները՝ տեղական համայնքների կարողությունների հզորացման և մարդկանց համախմբման միջոցով, որը կրերի սոցիալական կապիտալի, տեղական տնտեսության հզորացման և կյանքի որակի զգալի բարելավման: «LEAD4Shirak»-ի նպատակն է աղքատության, անհավասարության և խոցելիության նվազեցումը՝ ինտեգրված, կայուն և մասնակցային գյուղական զարգացման միջոցով: LEADER մոտեցման կիրառումը բարելավելու է զբաղվածությունը, գյուղական համայնքների տնտեսությունը, համայնքների կարողությունների հզորացումը և գյուղական բնակչության կենսապայմանները: Ծրագրում առանցքային են բնապահպանությունը և կանանց մասնակցության խթանումը:



2020-22թթ ընթացքում Ծիրակի հյուսիսի 21 համայնքների միավորումից ստեղծվել է «Հյուսիսային ուղի» տեղական ակտիվ խումբը (ՏԱԽ), հարավի 8 գյուղերի համախմբից՝ «Արագած հովիտ» տեղական ակտիվ խումբը, իսկ կենտրոնական 18 գյուղերի համախմբից ձևավորվել է նոր՝ երրորդ տեղական ակտիվ խումբը: Յուրաքանչյուր ՏԱԽ ունի մոտ 30 անդամ, ովքեր հավասարապես ներկայացնում են ՏԻՄ, բիզնես և քաղաքացիական հասարակություն ոլորտները: Առաջին երկու տեղական ակտիվ խմբերի բրենդավորումն ավարտված է, իսկ երրորդն ընթացքի մեջ է:



Երկու տեղական ակտիվ խմբերն ակտիվորեն աշխատել են իրենց տարածքային ռազմավարության մշակման վրա՝ ներգրավելով համայնքների ավելի քան 200 բնակիչների: Երրորդ ՏԱԽ-ը նոր է սկսել ռազմավարության մշակման փուլը:

ՏԱԽ անդամները մասնակցել են Վրաստանում փորձի փոխանակման՝ վրացական ՏԱԽ-երի հետ հանդիպելու և իրականացված ծրագրերին ծանոթանալու ճանապարհով: Ծրագրային թիմի մարզային խորհրդականը Շվեդիայում մասնակցել է ԼԻԴԵՐ-ի 30 ամյա գործունեությանը նվիրված միջազգային կոնֆերանսին:

Ավստրիական զարգացման գործակալությունը, ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը սերտորեն համագործակցելով Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ կազմակերպեցին Հայաստանում առաջին ԼԻԴԵՐ միջազգային կոնֆերանսը Շիրակի մարզում:

Համաժողովի նպատակն էր երկխոսության հարթակ ստեղծել տարբեր դերակատարների համար և կիսվել միջազգային փորձով:

Գործընկեր կառույցների հետ համատեղ ստեղծվել է նաև ԼԻԴԵՐ լոգո, որը միավորում է ԼԻԴԵՐ մեթոդաբանությանը իրականացվող ծրագրերը:



LEAD4SHIRAK

Գյուղական համայնքների զարգացման գործում տարբեր կառույցների մոտեցումների, կիրառվող մեթոդաբանության, ԼԻԴԵՐ-ի և փորձի փոխանակման նպատակով ՑԱՅԳ հեռուստաընկերության հետ համատեղ սկսվել է նոր՝ «Հանրային ֆորում» հաղորդումը: Յուրաքանչյուր ամիս թեմատիկ քննարկումներ են լինելու՝ ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և ՏԻՄ ներկայացուցիչների հետ:

Մայիս ամսին հայտարարվելու է դրամաշնորհների փուլը, որին կարող են դիմել «Հյուսիսային ուղի» և «Արագած հովիտ» տեղական ակտիվ խմբերի տարածքների բնակիչները:

Հիշեցնենք, որ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ակնկալվող արդյունքներն են՝

- 50 աշխատատեղ
- 75 ֆինանսավորված նախաձեռնություն
- 5350 ուղղակի շահառուներ

Ծրագրի նորություններին կարող եք ծանոթանալ հետևելով [Ֆեյսբուքյան էջին](#):